



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



150

1999

ԿՐԹ Ա.ՐԱՆ
ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ
ԳԱՍ Ա.

ԱԻՄՈՆ ՊԵՏՐՈՍ



Տ. ԵԱԶԵԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ
ԵՒ ՊԱՏՐԻՈՐԳԻ ՄՐՅՈՅ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ



ՅԵՐՈՒՍԱՂԻՄ

-1871-

Ա Զ Դ Ի Ս

Երջանիկ է այս ժամանակակից մարդկանց
շապրիբ, այլ և աւետարական բաներ և հանու-
չողութեանք քրիստոնէական ճշմարտութեանց :
Հայոց միայն մարդինը կը մնաւցանէ . իսկ Աւետա-
րանի ճշմարտութիւնքը կը պարագեն միտքն ու
սիրաց, կը կեցուցանեն հոգին և կ'անմահացնեն բո-
վանդակ մարդը :

Քրիստոնէական ոսյն վլեմնուտակին ծառա-
յլու քաղցր պարտաւորութեամբ արժան դատե-
ցինք — ԿՐԹԱՐԱՆ ԱՏԵՏԱՐԵԴԱԿԱՆ ԲԱՆԱՑ — Վեր-
նագրով գասեր հրատարակել Ժողովրդի ընթերցա-
նութեան համար, իւրաքանչիւր դատը առանձին
առարկի մէջ ամփոփել, որոնք եզրամն կանխա-
պէս ՍԻԾՆԻ մէջ եւս կը տպագրուին: Այժմ Ա.
Դասը — ՍԻՄՈՆ ՊԵՏՐՈՍ — հրատարակելով կը խօս-
տանանք այս եղանակաւ շարունակել և միւս դա-
տերու հրատարակութիւնը, թէ թարգմանելով և
թէ ինքնին երկասիրելով:

28. 1437

41434-ԱՅ

ԿՐԹ Ա. Բ. Ա. Ն

Ա.Ի.ԵՏՍՈՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

ԳԱՍ Ա.

Վ

ՍԻՄՈՆ ՊԵՏՐՈՒ

Հ

Յուլ. Ա. 42: Մարտ. Ժ. 15—18:

ՀԱՅԱՍՏԱՆ Պատի գլխաւորութեան և անսխալականութեան պաշտպաները կը ջանան գլխաւորապէս Պետրոսի առաքելութեան վրայ հիմնելիրենց փառուերը։ Հետեւապէս, նոյն տղաշտպաններու փառուերը ի հիմնաց ջրելու համար՝ հարկէ Պետրոսի առաքելութիւնը գլխուզութեան առնուլ և նոյնը աւետարանական ջինջ և յատակ հայելոյն մէջ նկատել։ Այսէ ամենէն կարծ և անմոլար ճանապարհը ։ Ա ան դի, ուր լւետարանի ճշմարիտ ոգին և սկզբունքը կը խօսին, անդանօր կը կարկամին մարդ-

կային լեզուք և յօդա կը ցնդին ամեն
փաստաբանութիւնք : Աւետարանի
համոզվե ոգին է ահա , որ կը խօսի հետ
տեւեալ յօդուածոյն մէջ , զոր գաղ-
զիականէն ազատօրէն թարգմանելով՝
կը հրատարակենք , և մեր ընթերցողաց ,
մանաւմնդ հռովմէական ազգայնոց
խորին մոտադրութեանը կընծայենք :

ԶԿԱՐԾ մի , Վնդրէաս անուամբ ,
Յիսուսի վրայ խօսուածները լսելով
ցանկացաւ հետեւի Յիսուսին : Վնդրէաս , հաւատալով որ Յիսուսն է
խոսացեալ Մեսիան , փափաքեցաւ
սոյն երանաւէտ լուրը հաղորդել իւր
եղայր Ամմանին , ուստի և շուտով
իւր եղայրը առաւ Յիսուսի մօտ
բերաւ : Եւ ետարանիզը կ'ասէ . “Եւ
հայեցեալ ընդ նա (ընդ Պետրոս)
Յիսուսի ասէ . Դու ես Ամման որդի
Յովաննու . գու կոչեցիս Ավասա , որ
թարգմանի Պետրոս (վէմ) : ” Եւ
որովհետեւ Յիսուս ոչ կը խարէ և
ոչ ունայն խօսքեր կ'արտասանէ , ու
ընման սոյն բառերը՝ գու կոչեցիս Ավասա

կամ վէճ, կը նշանակեն թէ՛ դու պիտի
լինիս վէմ, դու պիտի լինիս ժայռ։
Այսուհետեւ այս անունը մնաց ՈՒ-
մնի վրայ, և խւրնախկին անունը տա-
կաւ առ տակաւ ջնջեցաւ և կամ իւր
նոր անուան հետո միասին հնչուեցաւ։
Յիսուսի աշակերտները սկսան սովո-
րաբար և յաճախ Պետրոս կամ վէճ
անուաննել իրենց պաշտօնակից ընկե-
րը։ Մենք եւս Պետրոս խորհրդաւոր
անուամբ կը ճանչենք զԱյրմն։ Այս-
ուած իւր յաւիտենական հրովարտա-
կաց մէջ կանխապէս արդեն Պետրոս
անուանած էր զԱյրմն, ինչպէս և
ընտրած էր և զՎիւրոս Պետրոս (վէմ՝)
էր նա յառաջքան խւր մարմնաւոր
ծնունդն, Պետրոս է նա չկեղեցւց
մէջ մինչեւ ՚ի կատարած աշխարհի։
Պետրոս է նա յաւիտեանս յաւ խենից
Նր կը խստառիմնիք որ Յիսուս և ա-
ռանց նպատակի ոչ կը խօսի և ոչ կը
գործէ, խկոյն կը գտնենք ուրիշ ա-
պացոց մի եւս, որ Յիսուս գիտ
մամբ և նպատակաւ տուած է իւր
աշակերտին սոյն նշանական և խորհր-

դաւոր անունը : Յիսուս հանդիսաւ
որ առ թիւ կնքեց իւր աշակերտը Պետ
րու անուամբ : Խողովուրդը յուզուած
էր և միանգամայն երկու կուսակցուած
թեան բաժնուած Կրազովուեցի Յիս
ուսին նկատմամբ : Ոչի կետի վր
այ միայն համամիտ էին , որ Յիս
ուս մեծ է քան զամենայն մարդիկ ,
և այնչափ մեծ , որ չեին կարող հա
մազուիլ երբեք թէ նա ներկայ սե
րունդին կը պատկանի և ներկայ ժա
մանակի մարդ է . վասն զի անցած ժա
մանակի իրողութիւնքը և մարդիկը
առաւել յարդի և նախապատիւ էին
նոցա համար : Առքա կ'ընդունէին որ
Յիսուս այն մեծ մարդիկներէն մէկն
է , որով Աստուած կը փառաւորի :
Առքա կը կարծէին թէ Յիսուս՝ կամ
Յովհաննէս Ոկրտիմն է , կամ Եղ
զիան , կամ Երեմիան , կամ մի ոմն ՚ի
մարդարեց : Յիսուս ասաց իւր ա
շակերտներուն . “ Իսկ դուք զի ա
ռեք զինէն թէ իցեմ ” : Ոիմն Պետ
րոս պատասխանեց . “ Դու ես Քրիս
տոսն որդի Աստուծոյ կենդանեց ո :

Եւ Յիսուս իսկոյն ասաց . “ Երանի
քեզ , Ոիմն որդի Յօվնանու . զի
մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ ,
այլ չայր իմ որ յերկինս է : Եւ ես
քեզ ասեմ . Օ ի գու ես վէմ և ՚ի
վերայ այդր վիմի շնուցից զիշեզեցի
իմ և գրանիք գժոխոց զնա մի յազմա
հարեցցեն ” : Մատ . Ժ. 2 . 45—48 :

Այսպէս ուրեմն , Յիսուս հանդիս
սապէս Պետրոս անունը տուաւ Յով
նանի որդւոյն : Աւաջին անդամ երբ
տակաւին Պետրոս ամենեւին բառմը
արտօսանած չէր և երկրորդ անդամ
երբ սոյն առաքեալը յայտնեց իւր
դաւանաւթիւնը :

Պարոք կը համարինք խորհրդա
ծել թէ ինչո՞ւ համար Յիսուս փո
խեց Պետրոսի ծննդեան անունը .
Բայց հարդի է նախ և առաջ քննու
թեան առնուլ սոյն նոր անունը , սոյն
նշանաւոր կոչումը , զոր Յիսուս Քր
իսոսոս տուաւ Ոիմնին :

Ոմն անուններ նշանակութիւն
ունին ամեն ազգաց մէջ , բայց շատ
անդամ կ'այլայլուին և կը փոփոխին :

իոկ Երբայեցւոց մէջ այնպէս չէ : Առացա բառերը մեծ մասամբ անփոփոխ մնացած են : Վասն զի , Երբայեցւոց լեզուի մի գլխաւոր յատկութիւնն է , որ յատուկ անուններն անդամի մասու մի յայտնեն : Ո՞հ կ ազգատոնիմի կամ գերդաստանի ամեն բաղձանքները , ակնկալութիւնները , իղձերը և յիշատակները յայտնապէս կ'երեւէին նորածին մտնկանը տուած անուանակոչութեան մէջ , Բայց այս նկատմամբ չէ որ կամինք բացատրել Ամոն և Յով նաև անունները : Վասն զի , շատ անգամ երբ հայր մի անուն կ'ընտրեր իւր որդւոյն համար , Կախախնամութիւնն էր որ կ'ուղիւր հօր կամքը աստուածային կամաց համաձայն անուն տարու իւր զաւակին : Այսպէս ահա հրեշտակն էր , որ յայտնեց Օաքարիային՝ Յովնանես անուաննել իւր որդին , որ կը նշանակէ զնորիկ կամ պարգիւր Յաւիստենականին : Այսպէս անունը աստուած ային յատուկ կամքը փոխուեցաւ Յիսուս Քրիստոս Այսու և Այսու

պիսի ակներեւ գեպքեր կան քանի մի անուանակոչութեանց մէջ , որ անկարելի է ասել թէ՝ Պատուած ինքը չէ որոշած նոյն անունները : Ո՞ի թէ այսպէս չէ նաեւ Պօղոս առաքելոցն Աստուկամ կամ Աստուկամ Արղոս անունը՝ որ Աւառող թագաւորի անունն էր , որ զԴաւիթը հալածելով կը հալածէր զՕծեալն Աստուծոյ : Խնչպէս Աւառող թագաւորը , նոյնպէս և Աւառող Տարսոնացին , երկրուեան եւս հալածիչներ են . և այս առթիւ էր , որ Յիսուս Դամասկոսի Ճանապարհին վրայ ասաց Սողոսին . Ասւուղ , Աւառող , զի՞հարածես զիսոյ Շատ այսպիսի անուններ կան Երբայեցւոց մէջ , բայց մենք ըսկամենալով մի առ մի յիշել միայն կ'ամենք , որ Ամոնն կը նշանակէ Լաղ , իսկ Յովնան կը նշանակէ Եղանակ : Ի՞նչ գեղեցիկ անուններ : Խնչպէս գեղեցիկ կը պատշաճին այն առաքելոցն , որ սիրելի էր և միանգամայն մեծարայց Խնչպէս գիւրաւ կարող է հասկանալ ամեն քրիստոնեայ , որ Լաղ և Հյանի անուններ կրովը արժանի է նաեւ Պիո-

բոս կամ վեճ անունը կրելու :

Յիսուս երկու անդամ վեժաս կամ
վեճ անունը տուաւ Այմնին : Այս
անունը ի պղղան ամենեւին մթին
կամ անհասկանալի չէր : Բայց մար-
գիկ, վերջին ժամանակաց մէջ, սկսան
տարբեր կերպով մեկնել և առաջին
պարզութիւնը քողարկել Աւրեմննոյն
անուանակոչութիւնը վերսախին պար-
զելու միակ միջոցն է այն ճշգրիտ բա-
ռերուն գիմել, որոց թարգմանը Յի-
սուս Քրիստոսն է, և զորս առանդած
են մեզ Աստվէռս և Յովհաննէս ա-
ռետարանիչները : Կարող ենք հաւա-
տալ (կամ կարող եր հաւատալ Յով-
հանուս որդին), որ Պետրոս անունը ի
պղղան կը նշանակեր նոյն առաքելցն
անդրդուելի հաստատութիւնը : Ե-
թե այսպէս հաւատացած լիներ Պետ-
րոս, մեծ մոլորութիւն էր և անարդ-
նուաստութիւն : Վասն զի, ժամանակ
պիտի գար, որ Պետրոս ինքնին սաս-
տիկ հակասական պիտի գտներ այն
անուանակոչութիւնը, զոր ընկալաւ
իւր վարդապետէն, և որով միշտ

կ'անուանուեր իւրընկերակիցներէն :
Չը խօսիմք Պետրոսի ցաւալի ուրա-
ցութեան և փախատեան վրայ, միթէ
համոզման հաստատութիւն էր, մի-
թէ սիրոց հաստատութիւն էր նորա
յանձնապատանութիւնը եւ զայ-
րոյթը, որ թէեւ արխութիւն կը-
թուին, բայց մարմինն ու արխունն էր
որ մեծ գեր կը խաղացին Պետրոսի
մէջ : Աւրեմն ուրիշ նշանակութեամբ
էր որ Յիսուս Քրիստոս Պետրոս անուն
տուաւ Այմնին, և այս նշանակութիւ-
նը ինքնին յայտնեց յետագայ խօսքե-
րով . “Եւ ՚ի վերաց այդր վիմի շնե-
ցից վշեղեցի իմ” :

Հետեւապէս, Պետրոսի անուանա-
կոչութիւնը ոչ ուղակի և ոչ անուղ-
ղակի ամենեւին իւր անձին կամ բը-
նաւորութեանը չեն վերաբերիր,
այլ իւր առաքելական պաշտօնին և
դաւանութեանը : Յշեղեցին պիտի
շնուեր նորա վերայ, բայց ոչ թէ
Պետրոս Յշեղեցւոյ հիմն պիտի լիներ .
վասն զի մի է հիմն Յշեղեցւոյ և վէմ
անկեան, որ է Յիսուս Քրիստոս :

Պետրոսն եւս նոյն հիման վրայ պիտի
հաստառուէր ինչպէս շինութեան մի-
ւո քարերը, և նոյն հիմնենքէն պիտի
ստանար իւր ոյժը և զօրութիւնը։
Այնէ այսպէս չըն նաեւ միւս ա-
ռաքեալները։

Պետրոսի անուանակոչութենէն
առաջ կար արդէն Ակեղեցին։ Եղբ
հաւատացին և հետեւեցան Յիսու-
սին քանի մի անձնուք, իսկոյն կաղմը-
ւեցաւ Ակեղեցին. և այս հաւատացե-
լոց միաբանութիւնը, առ ուստի Յիսու-
սի լրութեամբ նստած, իւր մոքին,
իւր սրտին և իւր հաւատոցն մէջ կը-
կրէր համօրէն մարդկութեան ճա-
կատագիրը։ Այս նպատակաւ էր
որ Յիսուս ասաց այս փոքրիկ խում-
բին։ « Ո՞ի երկնչիր հօտ փոքրիկ, զի
հաճեցաւ հայր ձեր տալ ձեղ զարքա-
յութիւն։ » Պահ. Ժ. 52. Ակեղեց-
ին կար, ասացինք, յառաջ քան Պետ-
րոսի անուանակոչութիւնը, բայց կեր-
պով մի եւս տակաւին ըստ կար, ինքնաւ-
կամ, գործունիք, զինուորեալ յաղթական
և զՅիսուս Քրիստոսներկայացնող Ա-

Կեղեցին, բացեալ և ըստ մի օրինաց
և մարդարէից քարոզող Ակեղեցին
կըսկսի իւր թուականը Յիսուսի Քր-
իստոսի մահէն, որ այն ժամանակ
պիտի առ ինքն ձգէր ամեն մարդիկ,
երբ բարձրանար խաչին վրայ։ Եւ-
կամ, առելի ճիշդ ասել, Ակեղեցին
ունի իւր թուականը ՚ի գալստենէ
Հոգւոյն Որբոյ, որ Փրկչի տշակեր-
տաց ակնկալեալ և ցանկացեալ նշանն
էր։ Քրիստոնէութեան պատմութե-
թուականը առելի առաջ կըսկսի, իսկ
Ակեղեցւոյ պատմութեան թուակա-
նը կըսկսի յօրէ անտի Պենառեկոսէ-
ին։ Այս օրէն կըսկսի նոր տաճարի
շինութիւնը քարոզութեամբ Աւե-
տարանին։

Երդ՝ տեսնենք թէ ի՞նչ կարգ եւ-
ի՞նչ մասն ունի Արմեն այս մեծ գոր-
ծոց մէջ։ Տեսնենք՝ թէ Արմեն ի՞նչ էր,
և կ'արդարացընէ արդեօք Յիսուսի
խօսքը։ « Դու ես վէմ և ՚ի վերայ այ-
դոս վկան շինեցից զիկեղեցի իմ։ »
Այնէ ասենք, որ Պետրոս, Յիսու-
սի խօսքերը արդարացնելու կամ ան-

ձամբ կտուարելու համար , պէտք էր
որ (ինչպէս ոմանք տարապարտ կը
պնդեն) ոչ միայն համօրեն հաւատա-
ցելոց , այլ և իւր առաքելական պաշ-
տօնակցաց համար . լինէր գերագոյն
իշխան և հեղինակ ՚ի բանս վարդա-
պետութեան , լինէր աղքիւր ճշմար-
տութեան և վերին վճռահաս գա-
տաւոր յամենայն խնդիրս հաւատոյ ,
Պետրոս այս նկատմամբ երբէք չար-
դարացուց այն վսեմ տիտղոսը , զոր
իւր վարդապետէն ընկալու : Եւ
հետեւապէս , անհաւատարիմ էր հա-
մայն առաքելական Եկեղեցին , որ
երբէք չը ճանաչեց Պետրոսի սոյն իրաւ-
ուուկները կամ առանձնաշնորհու-
թիւնքը : Անհաւատարիմ էր նյսն ին-
քն Պետրա իւր կոչման մէջ , որ եր-
բէք չը բողբեց իւր իրաւանց համար :
Վասն զի , ոչ առաքեալք երբէք հնա-
զանդեցան Պետրոսին , և ոչ Պետրոս
մտաքերեց կամ յայտնեց երբէք , որ
առաքեալք սրարտին իւր հրամանին
հպատակիւ : Առաջին և նախնական
Եկեղեցւոյն մէջ արդէն կ'երեւին

կուսակցութիւնք , յորոց իւրաքանչյու-
րն ունի իւր մեծաւորն կամ առաջնոր-
դըն առաքեալներէն Պետրոս , առանց
իւր հաճութեան , ունի իւր կուսա-
կցութիւնը կորնթոսի Եկեղեցւոյն
մէջ , ուր զինքն նախապատիւ կը հա-
մարեն քան զլապօղս և քան զօղոս :
Եթէ Պետրոս մերին իշխանութիւն
ունէր , զոր առանց իւր կամաց կ'ե-
րաղէին ոմանք , կորնթոսի կուսա-
կցութիւնն կամ Պետրոսեան խումբն
էր ուրեմն ուղղափառ Եկեղեցին :
Սակայն Պօղոս կը ցաւի որ կուսակցու-
թեան քամնուած էն և կը նախատէ-
այն մարդիկը , որոնք փոխանակ Յի-
սուսին յարելու և Յիսուսի անուամբ
պարծելու , կը յարին կամ կեփասին
կամ պօղոսին և կամ Պօղոսին և նո-
ցա անուամբ կը պարծին : Ա . Կորնթ .
Գ . 4-5 : Պօղոս կը կշտամբէ զՊետ-
րոս ասելով . “Եւ լիբրեւ տեսիթէ
ոչ ուղիղ դնան ՚ի ճշմարտութիւն Եւ-
ւետարանին , ասեմ ցլեփառ առաջի
ամենեցուն . եթէ դու որ Հրէայդ
ես , հեթանոսաբար և ոչ հրէաբար

հետաս, զինարդ ստիպես հեթանոսաց
լինել հրէարէն „ • Գաղ. թ. 11—12:

Պօղոս կը պարծի իւր սոյնօրինակ վարուելուն վրայ : Խակ Պետրոս քը
բողոքէր երբէք : Աչ մի տեղ, ոչ մի
ժամանակ Պետրոս քը փափաքիր և քը
դործ գնէր, աւ ելի քան վայլ առա-
քեալս, վերին իշխանութիւն կամ
հեղինակութիւն : Երբէք իրեն քը վե-
րապահեր վերջին վճիռ կամ հաւա-
նութիւն : Եւ երբ կը ժողովին և կը
խորհրդակցին ամեն առաքեալները (ու
րո՞իք Պետրոսին նման սիւնք կը կոչուին,
Տիրոջ հետ իններյն պատճառաւ), այս
ժողովին մէջ անգամ, ուր պէտք էր
որ իւր Պատրութիւնը ցոյց տար Պետ-
րոս, եթէ երբէք հարկ կար ցոյց տա-
լու, ամենեւին իշխանական ձեւ քը
տեսնուիր, բայց միայն թէ առաջին
անգամ ինքն կը խօսի : Պետրոս կը
ցայտնէ միայն իւր կարծիքը և ոչ
թէ իւրեւ իշխանական կամք կ'առա-
ջագրէ : Պետրոս ոչ ժողովին նախագա-
հըն է և ոչ վիճաբանութեան չափա-
սորին : Պետրոս կը խօսի ժողովին

մէջ իմաստութեամբ և միանդամայն
խոնարհութեամբ : Այսով բանիւ, ոչ
այս ժողովին մէջ և ոչ Պետրոսի բո-
վանդակ կենաց և ընթացից մէջ, չենք
տեսներ ամենեւին այն տենչանքը կամ
կարծեցնալ իրաւունքը, զօր, յետ
ժամանակաց, չուովմի մէջ, Պետրոսի
գերեզմանին վրայ, Պապերը և պապա-
կանք ջանացին երեւան հանել նոյն
հեղ և խոնարհ առաքելոյն անուամբ:
Ի՞նչ է մեր տեսածն Վետարանի մէջ,
եթէ ոչ այս միայն, որ Պետրոսի ա-
նունն շատ անգամ միւս առաքեալ-
ներէն առաջ գրուած է, և աւելի
յաճախ ինքնն կը խօսի . բայց ոչ ապա-
քէն կը տեսնենք նաեւ, որ նա ինքն է,
որ յաճախ կը գթի, և նա ինքն է, որուն
մէջ անխոհեմ եռանդ յաճախ կը
նշմարուի : Վետարանի նոյն գլխոյն
մէջ, ուր Յիսուս կը կնքէ զիմոն՝
անուամբս Պետրոս կամ վէճ, նոյն իսկ
գլխոյն մէջ Աստվածայ կ'անուանէ զՊետ-
րոս իւր խօսքերուն համար : Եթէ
ասենք, որ Յիսուս փոխելով Ամսոնի
անունը և վէճ անուանելով կամե-

ցաւ քրիստոնէական միապետութիւն հաստատել և իւր աշակերտը միապետական աթոռի վրայ բարձրացը նել, ի զուր խօսած կը լինէր Յիւսուս, վասն զի, Պետրոս ոչ միապետ եղաւ և ոչ վեհապետական դահ բազ մեցաւ :

Եթէ ասենք որ Ամսնը վէճ էր, որուն վրայ պիտի շնուրէր Յիւսուսի Քրիստոսի Եկեղեցին, գարձեալ կարող չենք պնդել, որ Պետրոս պիտի լինէր առաքելապետ կամ առաքելոց առաքեալ, և միայն ինքն էր զրահաւորուած անսխալտականութեան զրահով իւր ընկերակից աշակերտաց մէջ որոնք ամենքը վկայ էին Յիւսուսի Քրիստոսի յարութեանը և հաղորդակից էին Հոգւոյն Որբոյ շնորհացը և լուսոյն : Կարող չենք պնդել, որ Պետրոս առաքելապետ պիտի լինէր, վասն զի Յիւսուսի խօսքերուն մէջ ամենեւին այդպիսի իմաստ չը կերպութեան վրայ հաստատած կը լինիք և ոչ թէ մեկնութիւնը՝ իւրաւանց, այսինքն չը կարենալով ։ Պրոց բնագիրներուն վրայ մարդկաւ մին չենք կառուցանել նոցա իմաստը կը փոխենք և մեր ձեռակերտին կը յարմարեցնենք . կամ աւելի պարզ ասել, մեր մարդկեղեն կարգադրու-

միայն իւր աթոռախն եւ յաջորդացը տանք, (այնպէս համարելով թէ աթոռ և յաջորդներ ունի,) եթէ Յիւսուսի այս պարզ խօսքը — Դու ես վէճ և ի վերայ այդ վեր շնեցի վեհեցի իմայնպէս մեկնենք, որ ոչ թէ Պետրոս ինքն, այլ Պետրոսէն զատ, Հառվեմայ բոլոր եպիսկոպոնները նոյն խօստման ժառանգորդներն են, որ Պետրոսին արուեցաւ, և նոքա միայն իրենց անձին մէջկ'ամփոփեն գերիշանութիւնն ամեն աթոռոց և համայն առաքելոց, եթէ ասենք որ Յիւսուսի խօսքերը Պետրոսի նկատմամբ աննշան են, բայց իւր յաջորդաց համար գերիշանութեան նշանակութիւն ունին, այսպիսի թիւր գատողութեամբ իրաւունքը մեկնութեան վրայ հաստատած կը լինիք և ոչ թէ մեկնութիւնը՝ իւրաւանց, այսինքն չը կարենալով ։ Պրոց բնագիրներուն վրայ մարդկաւ մին չենք կառուցանել նոցա իմաստը կը փոխենք և մեր ձեռակերտին կը յարմարեցնենք . կամ աւելի պարզ ասել, մեր մարդկեղեն կարգադրու-

թեան կամ չէնքին մէջ աստուածային խօսքերու իմաստ կը փնտռենք, փոխանակ աստուածային խօսքերու մէջ մեր հիմնարկութեան վճիռը փնտռելու : Խոկ և խոկ սոյն ձանապարհաւ կ'ընթանան եպիսկոպոսունք շուռվամայ, որոնք ոչ թէ աստուածային խօսքի փրայ կը հիմնեն Պապական իշխանութիւնը, այլ Կատուծոյ խօսքը կը ջանան հիմնել Պապական իշխանութեան վրայ : Եւ այսպէս ահամ քրիստոնէական սկզբունքները թիւր մեկնելով կը կործանեն և կը տապալեն հաւատոյ հիմնեքը, կը թիւրեն Ո. Գրոց իմաստը ամենասոսկալի և քմածին մտահաճութեամբ . կը բառնան ամեն կնիք սրբութեան, կը պատառեն ամեն ցանկ և պատռար ամբը ծութեան և ըստն ասպարէղ կը բանան, որ Ճշմարտութիւնը ոտնակօխ լինի և կատաղաբար յօրդեն այրանդակ կասկածներ և տարակցներ ընդդէմ Վւետարանի : Ոիով բանիւ, չութիւնն մի յանդգնարար հաստառել ջանալով, իրաւոնք կուտան ա-

մենակերպ ուրացութեանց և բացասութեանց : Ը ատ բաներ կան, բայց մենք չենք ուղեր երկարել մեր խօսքը : Պապականաց փաստաբանութիւնըը առանց փաստի են և առանց ապացուցի : Ազքա Ճշմարտութիւնը վուսած են ստութեան, և յայտնի ըստը վարագութած են խաւարամիտ մեկնութեամբ, որով և ամենասպարզ մըսքերը երկրայտութե հողմերուն մատնած են և ամենահաստատ սգիները ալեկոծ և յողդողդ վիճակի հաստցած : Եւ ահա այս է բուն պատճառըն, որ սկիեպտականութիւնը կամ մըստաւոր վարանքը յօրդան տալով մուտքործած է թէ Եկեղեցւոյ մէջ և թէ ընկերականութեան :

Եյսպէս ուրեմն, Յիսուսի խոստումն առ Միմնի ամենեւմն չունի և կարող չըր ունենալ այն ասրապայմանն իմաստը, զօր հնարեցին թիւր մեկնիչք : Իսայց ի հարկ է մեր Փրկչի խօսքերը անշուշտ իմաստ մի ունին : Եւ միթէ ինքնին բացայատ չէ այս իմաստը, և ինչ հարկ կայ երկար որոնել

Եթէ Աւետարանիները և Գործոց պատմիցը հաւասար տեսութեամբ կը նոյնին Պետրոսի վրայ, ինչորէս միւս Աւարելոց վրայ, այս մասին բնաւ պիտի չը զարմանակը և պիտի չը կարծենք թէ՝ Յիսուսի մարդարելութիւն նշանակութիւն չուներ: Եթէ ոչ բռնրովին, գէթ մասամբ Եկեղեցւց շինուածը պիտի բարձրանար Պետրոսի վրաց, և մենք, 19 գարերէն ըզէ կնի, կարող ենք Այսոնը վէմ կամ ժայռ համարիլ, յորմէ կոփուեցան իւր քարոզութեանը հաւատացողները: Եսայի ծառ 1: Եթէ Յիսուս, տարբեր, բոցց ճշմարիտ անուն մի տալով Այսոնին ասած լիներ-Դու Ես հայ ճշմարտութեան, և այս հացով Ես պիտի անոցանեմ Եթեղիս: և կամ թէ՝ Դու Ես ջորդ իներանի վարդապետութեան, Ես այս ջորդ պիտի արդոցանեմ Եթեղիս — բնաւ կարող չէնք հետեւ ցընել թէ՝ Պողոս, Յովհաննէս, Յակովոս, Ապօղոս, Տիմոթէոս, Թադէոս, Բարդու գուղիմէս և այլք իրաւունք չունին մասնակցելու այն անուանակոչու-

թեանը, վասն զի մի է ամենուն ուսած ճշմարտութիւնը, վարդապետութիւն և դաւանութիւնը: Ոչ ապաքէն ինքնի խիկական հայն և կենդանի ջուրըն Յիսուս Քրիստոս փոխարկեց իւր առաքեալները ՚ի հաց և ՚ի ջուր կենդանի: Ի՞նչպէս կը զանար ուրեմն երկնաւոր վարդապետը միւս առաքելց կոչումը, որոնք ամենեքեան քարինք էնին և մասունք անկեան Ոի մին Յիսուսի, որուն վրայ շինեցաւ Եկեղեցին: Արդ, եթէ Յիսուս Այսոնի անունը փոխած չը լինէր միւս առաքելց պէս և Պետրոս կոչած, դարձեալ Փրկչի խօսքը իւր նշանակութիւն պիտի ունենար Այսոնի առաքելութեան նկատմամբ, վասն զի նա եւս միւս առաքելց պէս աշխատեցաւ Աւետարանի լոյսը երկրիս վրայ տարածելու: Ակայն գուցէ հարցուի թէ՝ ինչո՞ն համար միայն Այսոնի անունը փոխուեցաւ և վէմ կոչուեցաւ: Այս պիտի հարցում մի երբէք կարող չէ առաքելական պաշտօնի մէջ առանձին արտօնութիւն տալ Պետրոսին: Առշափ

կամին քնող մեկնեն, ինչպէս կամին թնջ մէկնեն, առարելութեան մէջ բացառութիւն ըկայ : Առարելութե կոչումը հաւասարութեան վրայ հիմնած է, և ոգույն Որբյ շնորհը հաւասարապէ ո սփռուած է ամենուն վրայ և Աւեաարանի խրաքանչիւր խօսքերէն հաւասարութեան անուշահոտութիւնը միայն կը ծաւալի : Բնտելացէք միանդամ Աւեաարանի ու գւցն, ջնջեցէք այն կանխակալ մոռածութիւնները, որովք ջանացն ամանք մասնաւոր առանձնաշնորհութիներ վնասուել Պետրոսի վրայ, փարատեցէք մի անդամ ամեն մթութիւն և մը ապյլ, զբ կուտակեցին Պետրոսի վրայ թիւր մեկնութեան ամսերը, և խսկոյն կը տեսնէք, որ Յիսուսի խօսքերը պայծառ են իրեւ լցո, և կը լուսաւորեն ամեն միտք՝ որ լուսոյ կը փափաքի :

Ամեն գործոյ մէջ, եթէ սկզբունքին նայինք, կը տեսնէնք որ Աստուած միայն ինքն կը գործէ և իւր փառը սւրբին ըստար : Բայց եթէ սկզբուն-

քի բարձրութենէն դէպ ՚ի վար նայինք, կը տեսնէնք որ, արդարեւ Աստուած կը գործէ, բայց ունի նմանապէս և գործակիցներ : Վարդիկ գործակից են Աստուծոյ, վասն զի ինքն այսպէս կամեցաւ : Տարակյա ըլկայ որ մարդկանց գործը Աստուծոյ կը պատկանի, ինչպէս և մարդիկ ինքեանք, որնք Աստուծմէ ստեղծուած և զօրութիւն ստացած են գործելու համար : Բայց շատ անգամ Աստուծոյ գործը մարդկանց ձեռքով կը գործուի, թէ և տարբեր եղանակաւ և տարբեր աստիճանաւ : Օրինակի համար, դիւցազնատիան թատրերգութիւն մի կը ներկայանայ մեղ և կը տեսնէնք որ դերերը տարբեր են, թէ և ամենքն եւս իրենց տեղը և արժեքը ունին : Ամեն տեղ, ամեն ժամանակ և ամեն գործողութեան մէջ մարդիկ կան, ու բոնք այլոց օրինակ աալու համար առաջ իրենք կը սկսին, իրենք կը ձեռնարկեն եւ իրենք ճանապարհը կը հարթեն : Ամեն ընկերութիւն և ամեն հասարակութիւն, ամենէն ազատն

անդամ, երբ նշանաւոր գործ մի կատարել կը փափաքի, երբ երեւելի յեղաշընում մի առնել կը ձգտի, միշտ այնպիսի անհատներ կ'որոնէ, որոնք աւելի ընդունակ են գործոց յառաջադիմութեան համար: Այսպէս ևս, Կատուած, իւր երկնաւոր թագաւորութիւնը համար, կը յարուցանէ նոյնպիսի անհատներ, Քանի որ մարդկացին բնութիւնը այսպէս է, թէ ընկերական և թէ կրօնական ասպարհոցին մէջ, միշտ մարդիկ պիտի գտնուին, որոց միայն յատուել է սկիզբն առնել որ և իցէ մեծ գործողութեան, որոց միայն արուած է առաջն անդամ դրօշ պարզել և հասարակաց շարժմանը կարապետի նիլ: Աշխարհիս ամեն մեծամեծ իրողութեանց մէջ, որոնք փոփոխած և յեղաշըն են երկրիս երեսը և մարդկանց մոքերը, հասարակաց բաղմութիւնը միշտ առաջնորդ մի ունեցած է: Հասարակութիւնը միշտ առաջնորդ կը վնասուէ, ոչ թէ գաղափարներ ստանալու համար, այլ իւր ու

նեցածները իրագործելու համար, վասըն զի եթէ գաղափարներ ըունենար, առաջնորդ եւս չէր վնասուեր: Կատանդամ եւս, տակաւին հասարակութիւնը ըրմանած, ամենէն եռանդուար, ամենէն զօրաւորը, բայց ոչ թէ միշտ ամենէն ընտիրն և ըլսաւորեալն, ինքնին յառաջ կը խաղայ, ինքնին ձեռն կը միտ, և երբեմն ինքն միայնակ է բոլորովին և միայն իւր համար կ'աշխատի, բայց կը տեսնես որ իւր պարզած դրօշին ներքեւ բաղը մաթիւ բանակ կը համախմբի: Եթէ բանանը մարդկացին ազգի պատմութիւնը՝ հարիւրաւոր օրինակներ կը ներկայանան մեր աչքին: Կըզգա՞ր արդեօք կ'ուտեր ժողովուրդի պատգայ յացք, չպիտենք, բայց երբ անվեհեր նշան տօւաւ և դրօշ պարզեց Պատգական իշխանութեան դէմ, բիւրաւոր մարդիկ սոսկալի պատերազմի դաշտը նետուեցան և հետեւեցան կ'ուտեր ըմբն: Ովկին: Ովկ կը կարծէր իսկզբան՝ թէ անշան կը օնաւոր մի պիտի կարենար վեր կ'վայր ցնցել դարերով բարձրացած

Պապական իշխանութեան շէնքը և ան-
կանդմնելի կերպով հարուածել : Բայց
ինչո՞ւ լուտերի վրայ խօսինք, մինչդեռ
աւելի մերձաւոր և գեղեցիկ օրինակ
ունինք մեր առջեւ : Աչդ Տրդատայ
ահուելի բանակին և լէգէօնին մէջ
պատապարուած սոսկական զինուոր մի,
Ո . Գրիգոր , կռապաշտութեան ար-
հաւրանաց գէմ Խաչի գրօշը կը պար-
զէ , գառն տանջանաց կը մատնուի ,
եւ սակաւ ժամանակէն զինի , կը
տեսնես որ Եփրատայ ափանց վրայ
հաւատով զինուորեալ լուսատեսիլ
բանակներ կենարար Խաչի գրօշին տակ
կը տագլաւարին , մկրտուելով ՚ի ջուր
սրբութեան , ՚ի հուր զօրութեան - ՚ի
Հոգին Սուբր : Ելուպէս ևս , ըստին
տենք որ , քրիստոնէական տուաջին նո-
րածին Եկեղեցւոյն մէջ Պետրոսի ան-
ձը յաճախ կը ներկայանայ մեղ , ինքն
կը հնչեցնէ քրիստոնէական քարոզու-
թեան տուաջին բարբառ , բայց եր-
բէք իշխանական իրաւունք ըստին
գրէր իւր անձին . վասն զի եթէ Հը-
րէաստանի մէջ ինքն առաջին անդամ-

կը խօսի , Հեթանոսութեան մէջ Պօ-
ղոսն ու Վաղողոսն , Յաւագէոսն ու Յար-
դուղիմէոսն են , որք առաջինն կը հրե-
շեցնեն աւետարանական բարբառն :
Բայց եթէ լաւ խորհինք , կը տեսնենք
որ Եւետարանի քարոզութեան սկրդ-
բնաւորութիւնը և ոչ մէկուն կը վե-
րաբերի : Վասն զի աւետարանական
քաղցրալուր բարբառոց առաջին հըն-
չեւը Ինեթզէհեմի մսուրին մէջ կը
լսուի և Պողոթայի բարձր դիտա-
նոցին վրայէն իւր լուռմն կ'առնու :
Քրիստոնէութեան սկզբնաքարոզն նոյն
ինքն Քրիստոսն է , իսկ առաքեալք
նորա հետեւողքն են և քրիստուեան
աւագալուր ձայնի կրկնողքն : Ուրե-
մին մէր մնաց այս մասին Պետրոսի
կարծեցեալ իրաւասութիւնը :

Երդէն քրիստոնէական նորածին
Եկեղեցւոյն մէջ , որ Պրիստոսի շուր-
ջը կը ժողովուէր , մէնք բնաւ չենք
նշամարեր , որ Պրիստոս առաջին տեղը
Պետրոսին տուած լինի , վասն զի ա-
ռաջին տեղը և ոչ մէկուն կը պատ-
կանի : Վ'նչպէս սբանչելի են Փրկչի այս

խօսքերը , զոր արտասանեց Օերեւ
թեայի որդւոց մօր հարցման առթիւ .
“Որ կամկցի ի ձէնչ առաջին լինիւ
Եղիցի ձեր ծառայ .” Մար . 1 . 27 .
Փրկչի բերանէն բնաւ այնպիսի խօսք
մի ելած չէ , որով կարենանք հետեւ
ցընել թէ նա Պետրոսին գերիշաւ
նութիւն տուած է միւս առաքելոց
վրայ . Աենք եւս կարող չենք , արտա-
քց Աւետարանի , Պետրոսեան գեր-
իշաւանութիւն երազել . Ի՞նչ կրտես
նենք Դոր Կոտակարանի մէջ Պետրո-
սին նկատմամբ , թուենք մի առ մի ,
որպէս զի քրկարծուի երբէք թէ մենք
կանխակալ նախապաշտում ունինք
և կողմնակի կը վարուինք մեր դիտո-
ղութեան մէջ : Թուենք մի առ մի ,
որպէս զի բնաւ երկրայութեան տե-
ղի ըլթողունք մեր ասացուածոց մէջ :

Չենք ուրանար , որ Յիսուս յա-
ճախ իւր խօսքը Պետրոսին կ'ուղղե-
և Պետրոս յաճախ կը խօսի իւր ըն-
կերակցաց կողմէն : Չենք ուրանար ,
որ Յիսուս գողցես մասնաւոր մտա-
գրութիւն կը գարձնէ Պետրոսի վրայ :

Կը պատրաստէ , կը կրթէ , կը փորձէ .
Պետրոս գողցես գործի մ'է , զոր Յի-
սուս կը յարդարէ . մետաղ մ'է , զոր
կը զոէ . սուր մ'է , զոր կը սրէ : Պետ-
րոսի կրթութեամբ կը կրթին եւ
միւսները : Չենք ուրանար , որ Աւե-
տարանի ներկայացուցած առաքելո-
կան անուանց շարքին մէջ Պետրոսի
անունը յաճախ առաջին տեղը կը
դրաւէ : Չենք ուրանար նմանապէս ,
որ Պետրոս ինքն կ'առաջարկէ երկո-
տասաններորդ առաքեալը ընարել ի
տեղի Յուղային , “Որ անկաւ և գը-
նաց ի տեղի իւր .” Գործ . Ա . 25 : Իսկ
Հսկւոյն Արքց գալստենէն զինի , երբ
Եղուաց շնորհըլ ափաեցու , երբ
Նուից բազմութիւնը խոնեցաւ . ո-
րանք թիւնաւորուած չէն քահանա-
ներէն , երբ երիրի շարժման հետ
մարդկանց պրտերն եւս շարժեցան ,
գարձեալ Պետրոսն է , որ կը հրաւիրէ
նորբնծանները ի մկրտութիւն և երեք-
հազար երկրապատւներ կ'ըսկին եր-
կիրպագանել Աստուծոյ հոգւով եւ
Ճշմարտութեամբ այն քաղաքին մէջ ,

ուր սպանաւ Քրիստոս ։ Քանի մի օք
կ'անցնի, Պետրոս այն հաւատով ու
գեւորուած, որոյ մի հատիկն ընու
ներ կը տեղափոխէ, առաջի բազմնեւ
թեան հրաշալի բժշկութիւն մի կը
կատարէ ։ Պետրոս, իւր նոր քարտուա
թեան համար, զդթայի կը մատնուի,
բայց հինգ հազար անձինք կը կոչէ ՚ի
խոստովանութիւն նոր հաւատոյ ։
Պետրոս կրիարանաւորի և երբէք իւր
ազգեցութիւնը չը նուազիր, Պետ
րոսի ազատութիւնը զի՞նքը յառաջ կը
մոչէ դէպ ՚ի ամբոխը ։ իսկ նորա կա
լանաւորութիւնը կամ գերութիւնը
առ մոքն կը բերէ հրեական քահանա
յութեան անդամները ։ Պետրոս կը
յայտնէ քահանաներուն, ինչոքէս և
ամբոխին, մորդկանց երինաւոր աօր
գթութեան խորհուրդը ։ Եւ առա
ջին անգամ, Պետրոսի կալանաւորու
թեան ընկերակիցն Յովհաննէս կը
խոչէ իւր ըսութիւնը, կը գործակցի
Պետրոսին, կը հռչակէ, կ'աւետարա
նէ երինաւոր այցելութիւնը, խաղա
ղութեամբ ու պարզութեամբ սար-

սակ կը տարածէ քահանայից սրտե
րուն մէջ և կը դատապարտէ նոյա
անդործութիւնը ։ ՚իթէ արժան իւ
ցէ առաջի Կատուծոյ՝ ձեզ լսել առա
ւել քան Կատուծոյ, ընարեցէք ։ ՚ի
Գործ Դ. 19. Պետրոս ազատուելով՝
գարձեալ իւր սեզը կը գրաւէ առա
քելոց մէջ և կըսկսի գործել ։ Նոր
Կրտակարանի մէջ երկու սսկալի հրա
շից առաջնը Պետրոսին կը պատկանի ։
Նորա Ճայնիւ Վնանիա և Ապիլիա
յանկարծամահ կը լինին իրենց կեղծ
բարեպաշտութեան եւ ստահօսու
թեան համար ։ Ուսուցանեն և վար
գապետեն ամեն առաքելոց կը պատ
կանի, որովհետեւ ամենքն եւս ըն
կարան Նոգին Վուրբ ։ Բայց ձեռնար
կութեան կամ սկզբնաւորութեն մէջ
մասնաւոր յատիկութիւն մի կ'երեւի
Պետրոսի մէջ, մինչեւ որ կեցրոնները
կը բազմանան, նոր Եկեղեցին քանի մի
նորերը կը ծնանի, և իւրաքանչլւրն,
առաջնոյն պէս, իւր յառաջամարտիկն
կ'ունենայ ։ Փիլիպոս կ'ուսուցանէ
և կը սերմանէ Վետարանի նոր սեր-

մունքը Աստմարիայի մէջ : Պետրոս, առանց սերմանելու, կրվաղէ և կը հնձէ : Կա խուրձ կը կապէ, կը կարգաւորէ և Փիլիպպոսին հետ կը խնդակցի : Պետրոս այցելութեամբ կը շրջի ամեն Եկեղեցիներ . Գործ . թ . 52 : Ի՞մունէ արդեօք այսքանը : Ոչ : Պետրոս աշխատանք մի եւս ունի, զօր պիտի յիշենք : Պետրոս հանդիսապէս հեթանօսներ և Եկեղեցւոյ ծոցը կը մուծանէ : Կատանօր եւս, առաւել գործ կ'երեւի, քան թէ ուստուցանել : Պետրոս ոչ հնարեց, ոչ գտաւ, ոչ յդացաւ և ոչ մտաքերեց, որ Կատանօյ շնորհքը ընդհանրական է : Կա մի այն տեսիլ մի կը տեսնէ, որուն խորը խոկքան անթափանցելի է իրեն համար :

Այս տեսլեամբ կ'ուսանի, կը պատրաստուի Պետրոս յառաջելու դէպ ՚ի մի անակնկալ և նոր ճշմարտութիւն, կամ, աւելի պարզ ասել, դէպ ՚ի զարդարյութիւն, դէպ ՚ի հանրական ծաւարութիւն աւետարանական մեծ ճրշմարտութեան : Պետրոս ոչ թէ կ'ու-

սուցանէ, այլ ինքն է որ կ'ուսանի, երբ Աստուծոյ հրամանաւ կուռնէ լիս հարիւրապետի տունը կ'առաջնորդուի, և այն տեղ իւր տեսլեան մեկնութիւնը կը գտնէ . և երբ կը տեսնէ, որ Հոգին Առարք սփռած է իւր պարգեւները և դրօշմած է իւր կ'երով այն մարդիկը, որոնք ոչ Հոգեայ են և ոչ սերունդ Հոգեից, զարմացմամբ կը հրամարակէ Հեթանօսաց կոչման նոր և հրաշալի աւետիքը և կ'աղաղակէ մարդարէն հետ . “ Աւրախ լեր, ամուլ, որ ոչ ծնանենիր, գոչեա և աղաղակեա որ ոչդ երկնէիր . . . ընդարձակեա զաեզի խորանի քո և զրահից քոյ . կանգնեա և մի անխայե՛ր . . . ” Եսայի . ծ. Դ. 4-5: Ուր կը մնան Պետրոսի հրէական նախկին նախապաշարմուկքները սոյն օրինակ յայտնութեան առջեւ : Ո՞վ կարող է ընդդիմանալ և արդելու մը կը բռտելու այն մարդիկը, որոնք ընդունած են Հոգին Առարք : Կը տարկուսի արդեօք Պետրոս, կը տատամնի, կ'երկմտի : Ոչ երբէք : Կա

կըստապալէ այն պատուարը, այն ցանչ
կը, զոր սակաւ ինչ առաջ անկործաւ
նելի կը կարծէր : Կա իսկոյն կը դա
դարի հրէութենէ, ինչպէս և նորա
հաւատոները կը դադարին հեթանու
ութենէ, Պետրոս կը հեղու միլրա
տութեան ջուրը հեթանոս դլւխա
ներուն վրայ, և կուռնելիսոփ յարա
կին տակ կը կատարուի Վատուծոյ ա
մենամեծ խոստումը և կը բացուի
քրիստոնէութեան անհօւն ապադան:

Ահա առանց զանալու թուեցինք
մի առ մի Պետրոսի գործքերը, որ
պէս զի շատեն մեղ՝ թէ միայն Կոր
կտակարանի մի երեսը կը կարդանք:
Իսկ այսուհետեւ միայն Պետրոսի ա
նունը և հետքը պիտի տեսնենք: Ու
րոնեցէք, հետազօտեցէք, չերեւիր
Պետրոս: Գոգցես կը ծածկուի Պետ
րոսի անձը և կը լրէ նորա անունը:
Պետրոսի գործը տակարան առարու
ւած չէ: Կա պիտի աշխատի մինչեւ
իւրնահատակութեան վերջին և բեղա
մաւոր հանդէսը: Բայց քարոզու
թեան առաջին մշումէն զինի Պետ

բոսի դերը նոյն չէ: Կա իրօք և լուս
թեամբ կը հրաժարի այն առաջնու
թենէն, զոր առ ժամանակ մի կը վո
րեր: Հին Հռովմայ դիբատատոնեւ
լուն նման նա կը գառնոյ դեպ ի տ
րօրը: Եւ այսուհետեւ, եթէ փա
փագինք առաւելլութիւն մի կամ ա
ւագութիւն մի կիսուուել Պետրոսին
վրայ, ուրիշ բան չենք գտներ, բայց
միայն հեղութիւն և խոնարհութիւն:
Ու կարող է կարդալ և կամ ալ կար,
դաշած է երբէք Պետրոսի թղթերը,
առանց նշանքելու նորա հեղահամ
բայր և խոնարհ հոգին: Բացէք նորա
թղթերը և կարդացէք: Ուր է այն
անհամբեր և խրստ Ամմնը, որ կը
հարկանէ քահանայապետի ծառան:
Մաս: Էջ: 31: Ուր է այն յանձնա
պաստան Ամմնը, որ կը համարձակի
ասել իւր վարդապետին: « Թէպէտ
և ամեներեան գայթակղեսցին ի քէն,
առկայն ես ոչ գայթակղեցաց, » Մաս:
Էջ: 35: Ուր է այն յանդուգն Ամ
մնը, որ Յիսուսի տնօրէնութեան
կատարմանը դիմադրելով և նորա հետ

կագելով կ'ազաղակեր . « Քան լիցի
քեղ տէր , մի եղեցի քեղ այդ : » Այս
մն ոչ եւս է , և ոչ երեւի տեղի նո-
րա : Իսայ ուր է նմանապէս այն Այ-
մոնը որ կ'ուրանար իւր Տէրը և Ա ար-
դապետը : Չը կայ այս Այմոնը իւր
թաղթերուն մէջ , անհետացած և շը-
քացած է նա , ոչ միայն Փրկչի առ-
ջեւ . այլ և նոցա առջեւ , զորս Կ
պատերազմ կ'առաջնորդէր խաւարի
դէմ : Այմոնը փոխուած է Կ զգօն ,
քաղցր , մարդասէր և հեղահամբոյր
ծառայ Կ ստուծոյ և մարդկան : Այմոն
դարձած է հրաշալի տիպար իսոնար
հութեան և ամբութեան :

Արդ այս ամենը յառաջ բերելով
զինի շարունակենք այժմ ամեն կող
մեն սպարզել խնդիրը և ակներեւ ցոյց
տալ աւետարանական ճշմարտութեց
այն փրկարար արդիւնքը , զոր մար-
դիկ կարող են քաղել ուղիղ մեկնե-
լով և հասկնալով Կ ստուծոյ իսոպը :

Յ ԵՍՈՒՏ Ք ՐԵՍՈՍ առաքելութեան
կոչելով Յովաննու որդի Այմոնը ըս-

կրսաւ դաստիարակել աստուածային
վարդապետութեան վարժոցին մէջ .
Եւ գիտէք թէ Բնէ մեծ դաստիարա-
կութիւն պէտք էր Այմոնի վայրագ ե-
ռանդն ու կրտոտ բնաւորութիւնը
կրթելու և նորա մարմնաւոր նախան-
ձաւորութիւնն ու յանձնապատան
վեսութիւնը մաքրելու և մեղմելու
համար : Աքանչելի է Յիսուսի դաս-
տիարակութիւնը ամեն կողմէն և օ-
րինակելի ամեն մասամբ : Եկէք ու-
րեմն , գերդաստանի հայրեր , մա-
տաղ սերունդի ուսուցիչներ , ժողո-
վորդեան հովիւներ , եկէք և ուսէք
Յիսուսի աստուածային դաստիարա-
կութեան եղանակն ու ոգին : Եկէք
և ուսէք այս վարդապետարանին մէջ
հսկողութիւնն զգուշութիւնն ար-
դահատութիւնն անսպառ ներովզամբ-
տութիւնն և անյաղթ սէր , զոր Յի-
սուս կը գործադրէ իւր նորընտիր և
նորընծայ աշակերտորդ դաստիարակելու
համար : Յիսուս իւր ամեն աշակերտ-
ները կը դաստիարակէ և կը վարժէ ,
բայց Պետրոսի կրթութեան համար

յասուեկ հոգացողութիւն կը նշմար
ուի, վասն զի Պետրոսի քնառորու-
թիւնը յասուեկ մտադրութեան կը
կարօսի : Գուցե կարծէիք դուք՝
թէ Յիսուսի սիրելի աշակերտն Յափ-
հաննեւ աւելի գրաւած էր իւր վար-
դապետի ու ասւցական հոգատարու-
թիւնը: Այս Յովհաննէս և ո կը դաս-
տիաբակուեր, և կարելի է ասել թէ
կը գասահարակուեր Յիսուսի սրտին
վրայ: Աս ըստութեամբ կը մնանէր
իւր վարդապետի փրկարար խօսքերով
կը թափանցէր նոցա խորութեան մէջ,
կ'իւրացնէր աստուածոցին գաղտնիք-
ները: Կա, խիստ հեռաւոր ապագայի
համար, կ'ամփոփէր իւր մոտց մէջ
սրանչելի յիշառակներ և վունմ խոր-
հրդներ: Յովհաննէս մի պայծառ և
խաղաղ ասալ էր, որ պիտի բարձրա-
նար Եկեղեցւց հորիզոնին վրայ և
պիտի սփռէր իւր վարդապետութե-
լայսը իւր ընկերակցաց խօսելին եւ
քարտղելին զինի: Եւ Յովհաննէսի
խօսքը, իբրեւ աշխան կատարածի պր-
տուղ: պիտի լինէր նոր, սրանչելի և

անակնկալ լրումն քարոզութե Պետ-
րոսի, Յակոբայ, Պօղափ և այլց:
Այս ապագայի համար էր որ կը ջեր-
մանար և կը հասուննար Յովհաննէս
լուութեամբ իւր վարդապետի ան-
հուն սիրոյ վառարանին մէջ: Յով-
հաննէսի գասահարակութիւնը, զոր
Յիսուս սկսած էր, պիտի կատարումն
առնէր նորա մենաւորութեան և ըդ-
գաստ ծերութեան մէջ: Բայց Պետ-
րոսի ժամը այսքան հեռի չէր. նորա
ժամը հեշտ ելու վրայ էր: Առաջիկայ
պատերազմին առաջին հարուածները
նորա ձեռքով պիտի գործուէին: Պետ-
րոս զօրեղ ընաւորութիւն ունէր,
բայց իսիստ էր: Կորա կատարելու-
թիւնները և սնկատարելութիւնները
զարմանալի կերպով զուգորդուած
էին իրարու հետ, զորս բայց ՚ի Յի-
սուսէն գուցե անհնարին էր որ ու-
րիշ գասահարակ կարենար իրարմէ-
բաժնել և մաքրել: Այս մասին էր
ահա Յիսուսի յասուեկ մտադրութիւնը,
որ կը նշմարուի Վահապահին մէջ
Պետրոսի նկատմամբ: Երկնային վար-

գապեաը ամեն տեսակ միջոցներ գործ կլու դնէ Պետրոսի կրթութեան համար, Հարցումներ, Հարցափորձներ, յանդիւ մանութիւններ, և կրմարդէ թէ բանիւ և թէ գործով, մինչև որ կը պատրաստէ առաքելական պաշտօնին համար:

Պետրոսի օրինակէն կ'ուսանինք մենք, որ Վասուած յատուկ մասդրութիւն կը դարձնէ այն մարդկանց բնաւորութեան վրայ, զարս ինքն ՚ի պաշտօն կը կոչէ և զարմանալի կերպով կը յզկէ, կը կանոնաւորէ և իր նպատակին կը ծառայեցնէ: Ի՞նչ էր Յիսուսի դաստիարակութէն նիւթը: Ի՞նչ էր նորա կրթութեան առարկան, եթէ ոչ հաւատը, այն հաստատուն հաւատը, զար Վաքեալք պիտի ու նենային Վետարանի Յայտնութեան մեծ խորհրդին վրայ, որ Էր Վարժառութիւն Վաստածորդուոյն: Քանի որ Վատուծոյ թագաւորութիւնը այս հաւատոյ վրայ հիմուած էր, անհնարին էր ուրեմն առանց այս հաւատոյն ու նենալու առաքելութէ պաշտօն վարել: Եթէ ըսկայ այս հաւատը, ան-

օգուտ են ամեն բնական ձիբքերը, ամեն տաղանդները և ընդունակութիւնները: Հետեւապէս կարող ենք համարձակ ասել, որ Պետրոս իւր հաւատով միայն կենդանի անդամ պիտի լինէր քրիստոնէական նորածին Եկեղեցւոյն և ոչ թէ իւր բնական կատարելութեամբ, վասն զի նորաբնական յատկութիւններն անդամ պէտք է որ հաւատով կանոնաւորէին, հասունանային եւ օգտակար լինէին Քրիստոսի Եկեղեցւոյն:

Արդ՝ կը հարցնեմք այժմ՝ ի՞նչ պէս կարող է մարդ գլուխ կամ առաջնորդ լինիլ մի ընկերութեան, առանց անդամ լինելու, և ի՞նչպէս կարող է անդամ լինիլ, առանց նոյն ընկերութեան սկզբունքները և օգուտաները ճանաչելու. Վաստածումք ամեն ընկերութեան կը վերաբերի, նաեւ քաղաքականին: Եթէ մէկը քաղաքական վարչութեան կամ ընկերութեան գլուխ անցնի, առանց զայն ճանաչելու, նա բռնաւոր կը լինի և ոչ առաջնորդ: Եթէ քաղաքականին

համար այսպէս է, որչափ տռաւել
հոգեւորին համար ։ Հոգեւոր ընկե-
րութիւնը, քանի մի յայանի սկզբունք-
ներու վրայ հիմնուելով ուրիշ նպա-
տակ կարող չէ ունենալ, բայց եթէ
իւր սկզբունքը քարոզել և նոյն սկզբ-
ըունքը գաւանող և սիրադ իւրաքան-
չիւր անգամ հաւասար մասն ունի
նոյն ընկերութեան մէջ, ի՞նչ էր քր-
դիսունէ ական ընկերութեան սկզբ-
ըունքը ։ Յասութ է Քրիստոն, որդի-
ասունց ԿԵՆԴԱՆԻՈՑ ։ Այս է քրիս-
տոնէ ական ընկերութեան միակ ըս-
կզբունքը ։ Քանի որ այս Ճշմարտու-
թիւնը կայ, կայ հետեւապէս և քր-
դիսունէ ական ընկերութիւնը ։ Իսկ
եթէ այս Ճշմարտութիւնը տապալի,
կը տապալի ընդ նմին և քրիստոնէ ա-
կան ընկերութիւնը կամ Եկեղեցին,
վասն զի կը մնայ առանց սկզբան, ա-
ռանց իրաւանց և առանց անուան ։
Երբ Պետրոս պատասխանեց Յիառ-
պին, “Իու ևս Քրիստոն, որդի Աս-
տուծոյ կենդանւոյ ։ Յիառու ասաց .
“Երանի քեզ Ախմնի, որդի Յովիանու,

զի մարմին և արիւն ոչ յայտնեաց
քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է ։
Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ,
և ի վերայ այդր վիմի շնորհից զեկե-
ղեցի իմ և դրունք դժոխոց վնա մի
յաղթահարեսցեն ։ Պետրոսի մէջ
խօսովը մարմինը եւ արիւնը չէր ։
Վէմը Պետրոսի անձն չէր, այլ իւր
սոյն գաւանութիւնը ։ Իու ես Ք. Ս.
Շնորհու Արք ։ Աստուծոյ կենդանաց ։ Այս
գաւանութիւնն էր, զոր պիտի չկա-
րենային յաղթահարել դժոխոց գը-
րունքը ։ Այս գաւանութիւնն էր
քրիստոնէ ական Եկեղեցւոյ անկոր-
ծանելի սկզբունքը ։ Եւ միթէ միւս
առաքեալները չը գաւանեցին այս ըս-
կզբունքը և չը քարոզեցին համայն-
շակարհի ։ Այս մնաց ուրեմն Պետրոսի
անձնաւորութեան գլխաւորութիւն ։

Այն մարդիկը, որոնք թեւթեւամը-
տաբար ջանացին ուրիշ հիմն վրայ
քարձայնել Քրիստոսի Եկեղեցւոյ շն-
ուածութ և որոնք ուրիշ կեդրոն երա-
զեցին Եկեղեցւոյ համար և ոչ Ք. Քրիս-
տոս որդին Աստուծոյ կենդանաւոյ, այն

մարդիկը իրենց երազական և սուտ
ընկերութեամբ յափշտակեցին Քնի
եկեղեցւոյ անունը և գողունի անու-
նը պահպանելով ուրացան էութիւ-
նը, ուրացան իրական ճշմարտութիւ-
նը : Վասն զի առանց այս դաւանու-
թեանը — Դու ես Քրիստոն Որդի Աստո-
ծոյ — Եկեղեցի և Քրիստոնէութիւն
ունայն բառեր են, պաշտօն՝ աւա-
զակութիւն, և խորհուրդները՝ խաղ
սեղանակապտութեան : Քրիստոնէ-
ական ամեն ճշմարտութիւն այս խօս-
քերուն մէջն է . “Դու ես Քրիստոն
Որդի Աստուծոյ կեդանւոյ” : Դու
ես Քրիստոն, Օծեան Աստուծոյ,
օծեալ երբակի օծմամբ, որով կ'օծու-
եին հին օրինաց թագաւորները, քա-
հանայապետները և մարդարէները :
Դու ես թագաւոր համօրէն մարդ-
կութեան : Դու եռ գերագոյն մար-
դարէ, որուն չափով չը պարգեւե-
ցաւ Հոգին Սուրբ : Դու ես քահա-
նայապետ յաւիտենական, որ կենօք
և մահուամբ պատարագեցիր անձո՞
՞քաւութիւն մեղաց մարդկան և

ամեն զոհագործութիւն յառաջքան
զքեղ նշան էր միայն փրկարար զեն-
ման անարատ Գառփնդ : Դու ես
Որդի Աստուծոյ կենդանւոյ, որ երե-
ւեցար մարդկան, յայտնեցար աշխար-
հի . քո պատմութիւնը մեր պատմու-
թեան հետ խառնեցիր, քո յիշատա-
կուդ գարերու մէջ սերմեցիր, մարդ-
եղար, որպէս զի մարդն աստուածա-
ցնես : Միավ բանիւ, գու ես Միջ-
նորդ և Փրկիչ մարդկան, որ քս ան-
ձիդ մէջ կրեցիր լրումն աստուածու-
թեան և լրումն անմեղ մարդկութեան,
եղեր կենդանի կաղ Աստուծոյ և
մարդկանց մէջ, և հաշտեցուցիր եր-
կինքը՝ երկրին՝ և Արարիը՝ արարածոյն
հետ : Քո մահուամբ կատարեցիր,
սրբագործեցիր և կնքեցիր այս հաշ-
տութեան գաշնագիրը : Քո մահ-
ուամբ մարդկութիւնը նորոգեցաւ և
ամեն անհատ իրաւունք և պարտք
ստացաւ քո թագաւորութիւնդ յա-
ռաջեցնելու : Ես յո, դու ես Քրիստոն
Որդի Աստուծոյ կենդանւոյ, և ոչ թէ
օգերեւոյթ պատմութեան, ցնորք ե-
րեւակայութեան, երաղ մարդկային

մտաց և ուրուական տկարամոռւթեն։
Դու ես Որդի Աստուծոյ կենդանւոյ և
առանց քո չլկայ քրիստոնէութի, չկայ
եկեղեցի քրիստոնէական, ոչ ՚ի ուսով
և ոչ յաշխարհի ուրեք ։ առանց քո
չլկայ յոյս, չլկայ հանդերձեալ, չլկայ
երկինք, չլկայ Աստուծութ, այլ միայն
փոշի, արտասունքով թթջուած։

Այս է բոլանդակ մարդկութեան
վիճակի պատկերը առանց Յիսուսին։

Առանց հաւատալու, սիրելու և
հռչակելու այս ճշմարտութիւնը՝ ան-
հնարին է Աստուծոյ պաշտօնեայ լի-
նիլ և վէմ շնուռածոյն Եկեղեցւոյ։
Այս կրօնական հաւատը կամ ճշմար-
տութիւնը կը պարունակէ իւր մէջ
նոյնպէս բարոյական ճշմարտութիւն։
Այս է կեդրոն և յօդ ամենայն առա-
քինութեանց։ Այս է կեդրոն և յօդ
ամեն ճշմարտութեանց։ Ախայն այս
ճշմարտութեամք կամ այս գաւանու-
թեամբ ամեն ընդունակութիւն ա-
ռարինութեան կը փոխուի։ Իսկ ա-
ռանց նորան՝ ամենագեղեցիկ յատ-
կութիւնը՝ խոչընդուներ են և ամեն
խաղաղ ափունք՝ արհաւալից վտանգ-

ներ։ Ախայն սոյն ճշմարտութեան
դաւանաւթիւնն է, որ կը բարեզար-
գէ, կը չափաւորէ, կ'ամոքէ, կը խա-
զաղէ, կ'ոգեւորէ առանց շփոթելու,
կը բարձրացնէ առանց աղմկելու և
կը զարդացնէ կը մեծացնէ մարդոյ
կեանքը սբանչելի դաշնակաւորու-
թեամբը, Այս առուուածային բոցն է,
որ կը մաքրէ կըզտէ մեր կըից մար-
մաւոր մասունքը, ընտիր անօմք կը
կազմէ. և ահա սոյն անօմքն, սոյն առ-
առածային հրով լուացուած մետա-
ղըն է, որ գործ կը գրուի սրբութե-
տաճարի ամեն պիտոյից համար. Առան-
գը կը բարեխառնի խոհեմութիւն, խո-
հեմութիւնը կ'ոգեւորի եռանդեամբ,
յանդգեռութիւնը կըփոխարկի արիու-
թեան և քաջութեան, համոզումը
կը զօրանայ հիմամբ և ոչ վիճաբանու-
թեամբ։ աշխոյժը կ'ուսանի համբե-
րութիւն, անձնութրութիւնը կը խու-
սափի փառքն և ըստ տագնապիր յա-
ջողութեան կատարածը տեսնելու,
վասն զի գիտէ, որ սերմանող և հըն-
ձող միասին պիտի փայելեն։ Ա երջա-
պէս ոչ արդարութիւնը ներողամբ

տութեան կը զոհուի և ոչ ներողամբ տութիւնը արդարութեան, ոչ փափկաստութե կը զեղանի մարդ, և ոչ խաստութեամբ կը քարասրտի : Այլ եռանդուն և ընդնմին իշխող, ազատե միանդամայն հնազանդ, կը փայլեցրնէ ճշմարիտհաւաստացեալն իւրանձին մէջ թէ բանական մարդոյ գեղեցկութի, գոհունակութիւն, անձնիշխանութի, և թէ քրիստոնեայ մարդոյ արդարամութիւն, ուղղութիւն, շափառութիւն արդարասիրութիւն, վստահութիւն և ազդեցութիւն : Երանին որոնք կարող են ՚ի խորոց սրտէ ասել Յիսուսին : « Դու ես Որդի Աստուծոյ կենդանւոյ ո : »

Յիսուս, երբ Այմոնի անունը փոխեց և վեց անուանեց, արդէն կը ճանաչէր և կը կարդար նորա սիրութ, և երբ Պետրոս իւր դաւանութիւնը յայանեց թէ, « Դու ես Քրիստոսն, Որդի Աստուծոյ կենդանւոյ ո այն ժամանակ Յիսուս կրկնեց . « Դու ես վէմ : » Եւ որովհետեւ միայն Յիսուսն է որ կը քննէ մարդկանց սիրութ և երիկամունքը, հետեւապէս միայն Յի-

տուսին կը պատկանէր անսուանտիու չութեան իրաւունքը : Միայն Կաէ, որ գիտէ թէ մարդն ինչ է և ինչ կարող է լինիլ : Վարդ ճանաչելու նկատմամբ շատ պարագաներ կան, որ մարդոյ հասողութենէն վեր են : Քանի՞ քանի՞ պարագաներ կան, որով երկու անհատներ իրարու կը նմանին, և սակայն տարբեր են, և ընդհակառակն : Վարդ կարող չէ ստուգապէս այս պարագաները որոշել, այլ միայն Աստուծութիւն, որ կ'որոշէ : Այս առթիւ Նեղեցւոց Հայրերէն մէկը խիստ գեղեցիկ ասած է . « Ճենայն մարդ խակապէս այն է, ինչ որ է յաշա Աստուծոյ, ոչ աւելի եւ ոչ պակաս : » Ուրեմն միայն Աստուծոյ տուած անունն է, որ ճշմարիտ գաղափար կը յայտնէ, և այս գաղափարը Պետրոսի անուանակոչութեան մէջ իւր դաւանութիւնն է : Աստուծութիւնն ատ և իւր անունը Վեհապանի մէջ, որպէս զի զինքն նցն կոչմամբ անուանենք, այսինքն՝ Աստուծութիւնը Աւել է : Այս անունը ճշմարտապէս ճանաչել կը նշանակէ ամեն բան իմանալ : Աւ-


նշանակէ իմնանալ, որ այս աշխարհը
անպատճառաւ խառնուրդ կամ քաօս
չէ, այլ աշխարհ է, Ալ նշանակէ ձա-
նաչել, որ մեր երկրաւոր ասպարէզը
առանց պատճառի և առանց նպա-
տակի չէ: Ալ նշանակէ ձանաչել, որ
մեր անկման մէջ անգամ Վասուած
կը կարեկցի մեր լիսայ և կը փափաքի
փառաւառիլ մեր գարձով: Ալ նշանա-
կէ ձանաչել մեր երջանկութեան ճշշ-
մարիս անունը, որ է Ծնորի, և մեր
վշտաց ստոյգ կոչումը, որ է Փոքրու-
թիւն: Ալ նշանակէ ձանաչել, որ ճշշ-
մարիս կեանքը մեր անուանած կեան-
քը չէ, այլ մեր ճշմարիս կեանքը Յի-
սուսն է, որ է Կ ծոց Հօր: Ալ նշա-
նակէ, վերջապէս, ձանաչել մեր ճշշ-
մարիս անունը, որ է — Ո՞ւս Ե՞ս այժմ
որդիք շնորհաց, որ Երբեմն եինք որդիք Բոր-
իութեան: Այս նոր անուանակոչութիւնը
յայտնուեցաւ Խաչի թարձրութեն! և
և գրուեցաւ Վետարանի մէջ, ուր
ամենէն տկարն անգամ կարող է կար-
դալ ամենէն իմաստունի հետ: Պետ-
րս եւս ոչ թէ գլուխ եկեղեցւոց է,
ոչ թէ գլուխ առաքելոց է, այլ որդի

շնորհաց, ինչպէս և ամեն ճշմարիս
քրիստոնեացք: Ալ որ չը հասկընար
կամ չուղիր խոստովանիր աւետարա-
նական այս պարզ ճշմարտութիւնը,
նա հեռի է Վետարանի ողիէն եւ
փոխանակ ՚ի լոյս ընթանալու՝ խաւա-
րի մէջ կը քաջի:

Վասուած վինքը Ալ անուանելով
ամեն բան անուանած է: Ալ է նա
և սէր աւանդած է իւր հետեւողնե-
րուն և ոչ գլխաւորութիւն, իշխա-
նութիւն, եւ պետական արտօնու-
թիւն: Քրիստոնէութեան գլուխը,
Եկեղեցւոց գլուխը՝ Ալ է, վասն զի
անհուն սէրն, անպատճ սէրն ինքն
Քրիստոն է: Ալ բեմն մերմենիք թիւր
մեկնութիւնները, վառուինք Վե-
տարանի ճշմարիս ոգւով և հայցենք
ասելու: Ալ Տէր, ով ասոււածային
գասմիարակ մարդկութեան և ճշմա-
րիս առաջնորդ անուանակոչութեան,
ժողովէ ամեն մարդիկ քս իմաստու-
թեան վարժարանի մէջ: Այս ամեն
սիրու կենդանի, անյալ և սուրբ յան-
կութեամբ: Իմաստանցու ամեն միտք
ձանաչել քս ճշմարիս անունը, որ է

ԱՅԻ : Ո՞ի թողուր, որ մարդիկ սրսնեն
քո անունը միայն իրենց մտածութեն
օրինաց մէջ, միայն ընկերութեան և
տիեզերաց կարգաւորութեան մէջ,
միայն մարդկային բնութեան կարօ-
տութեանց մէջ, այլ զօրացո սրսնել
քո անունը՝ քո փրկարար խաչի ձա-
ռին մէջ, յարում ամենայն գանձք
իմաստութեան և գիտութեան ծած-
կեալ կան : Եյն պաշտելի անունը,
որով անուանեցեր զքեղ Ռեթղեհե-
մի անշուք մսուրին մէջ, Գեթսե-
մանի պարտիզին մէջ և Գողգոթայի
բլրակին վրայ, այն վեհ և միսիթա-
րիչ անունը թող գրօշմուի յաւիտեան
մեր խղճի եւ սրտի մէջ : Յող մեր
կեանկը մի կենդանի բարբառ լինի
քո սուրբ անուանակոչութեանը և
միանգամայն պատասխանի ու արձա-
գանք այն քաղցր և փառաւոր անուա-
նը, որով անուանեցեր զմեղ : Տուր
մեղ, Տէր, զօրութիւն, որ արժանա-
պէս կրենք քո և մեր անունը աշխարհի
վրաց : Տուր մեղ կարողութիւն, որ քո
Աէրդ թագաւորեցնենք երկրի վրայ
և յաւերժացընենք յերկինս, ամեն :

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
660
661
662
663
664
665
666
667
668
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
730
731
732
733
734
735
736
737
738
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
740
741
742
743
744
745
746
747
748
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
810
811
812
813
814
815
816
817
818
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
820
821
822
823
824
825
826
827
828
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
830
831
832
833
834
835
836
837
838
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
840
841
842
843
844
845
846
847
848
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
880
881
882
883
884
885
886
887
888
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
910
911
912
913
914
915
916
917
918
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
920
921
922
923
924
925
926
927
928
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
930
931
932
933
934
935
936
937
938
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
940
941
942
943
944
945
946
947
948
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
980
981
982
983
984
985
986
987
988
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
1000



1808

ՀՀ Ազգային գրադարան



NL0331425

ՀՀ Ազգային գրադարան



NL0331423

ՀՀ Ազգային գրադարան



NL0331428

ՀՀ Ազգային գրադարան



NL0331427

ՀՀ Ազգային գրադարան



NL0331426

ՀՀ Ազգային գրադարան



NL0331422

ՀՀ Ազգային գրադարան



NL0331421

ՀՀ Ազգային գրադարան



NL0331420

